7.	Զաքարյան Ալբերտ Արտակի	երիտասարդ	150000	01.12.2023 թ.- 30.11.2027 թ.

Նախագծի շրջանակներում հրատարակված գիտական աշխատանքներ

1. Shmavonyan G., Tran T.-H., Cheshev D., Averkiev A., Sheremet E., Chapter 5.4. "Nanospectroscopy of graphene and two-dimensional atomic materials and hybrid structures", in Vol. 3: Applications in 3-volume Textbook "Optical Nanospectroscopy: pp. 401-439, Alfred J. Meixner, Monika Fleischer, Dieter P. Kern, Evgeniya Sheremet, Norman McMillan (Eds.), Textbook series, Publisher de Gruyter, Berlin, Boston, 1128 pages, December 31, 2022 (in English).
2. Misakyan L., Shmavonyan A., Shmavonyan G., Surface rubbing technology for obtaining graphene and two-dimensional materials and structures, International conference of students and young researchers in theoretical and experimental physics (HEUREKA), Abstract Book, Paper C1, p. 57, May 16-18, 2023, Lviv, UKRAINE.
3. Shmavonyan G.Sh., Zadoyan O.A., Misakyan L.H., Shmavonyan Gay.Sh., Knobloch T. Two-dimensional Sunrise in Armenia, PanArmenian Conference, November 17-22, 2023, Abstract book, p. 122-123, Yerevan, ARMENIA.
4. Shmavonyan G., Sattari-Esfahlan S., Misakyan L., Shmavonyan Gay., Zadoyan O., Grasser T., Knobloch T. Layered nanostripes of transition metal dichalcogenides obtained using the Surface Rubbing Method, European Materials Research Society (E-MRS) Fall Meeting 2023, Abstract Book, Paper K.07.1358, September 18-21, 2023, Warsaw, POLAND.
5. Misakyan L.H., Shmavonyan A.G., Shmavonyan Gay.Sh., Shmavonyan G.Sh. An extremely simple, fast and ecologically clean Substrates Rubbing method for mass production of nanostriped 2D atomic sheets, nanostructures and nanocomposites, Conference of young scientists "Lashkaryov Reading", p. 78-80, April 4, 2024, Kyiv, UKRAINE.
6. Misakyan L.H., Shmavonyan A.G., Shmavonyan Gay.Sh., Shmavonyan G.Sh. Tunable 2D nanostriped sheets, nanostructures, nanocomposites, coatings and devices obtained by Surface Rubbing Technology, NanoPQIQO-2024 Conference, Abstract book, p. 44, May 13-17, 2024, Russian-Armenian University, Yerevan, ARMENIA.
7. Shmavonyan G., Misakyan L., Shmavonyan A. Engineered nanostructured materials with nanostriped surfaces: bridging the gap between Space and Earth, European Physical Journal D (EPJ D), 2024 (in press).
8. Շմավոնյան Գ., Շմավոնյան Գայ., Միսակյան Լ., Շմավոնյան Ա., Զաքարյան Ա., Նանոտեխնոլոգիայի և արհեստական բանականության նորարարական սիներգիան՝ բարձր տեխնոլոգիաների զարգացման գրավական, ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի «Դատական փորձաքննություն և քրեագիտություն» հայկական հանդես, 2024 (տպագրման փուլում է):

Նախագծի շրջանակներում գիտաժողովներ և այցելություններ

ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ

1. «Նորամուծության և ձեռներեցության ազգային շաբաթ» (INNO Armenia-2023) միջոցառում, մասնակիցներ՝ խմբի բոլոր անդամներ, պանելային քննարկման զեկուցող՝ Գագիկ Շմավոնյան և այլն, կազմակերպիչ՝ «Նորամուծության և ձեռներեցության» ազգային կենտրոն, ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, ապրիլի 17 – 18, 2023 թ., Երևան, ՀՀ:
2. «Երկչափ նյութեր և սարքեր» 2-րդ միջազգային սեմինար-գարնանային դպրոց (2DMD-

2023), մասնակիցներ՝ խմբի բոլոր անդամներ և 5 երկրից (Ավստրիա, Գերմանիա, Իտալիա, Չինաստան և Ռուսաստան) նանոտեխնոլոգիայի բնագավառի հայտնի 15 գիտնականներ, ներառյալ Ավստրիայի «Միկրոէլեկտրոնիկա» ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Գրյոսեր Թիբորը և այլք, գիտաժողովի վարող՝ խմբի ղեկավար՝ դոկտոր Թերեզիա Քնոբլոխ, զեկուցող՝ պրոֆեսոր Գազիկ Շմավոնյան, ապրիլի 25 – 28, 2023 թ., Երևանի Hotel Ani Central Inn հյուրանոցում: Գիտության կոմիտեի կողմից ստացված դրամաշնորհի շրջանակում խմբի կազմակերպած միջազգային սեմինարը և գիտական վերջին գործունեությունը լուսաբանվել է «Առաջին» լրատվական ալիքով և ՀԱՊՀ կայքում: Վերջինիս մասին հարցազրույցներ են տվել համաղեկավարներ դոկտոր Թերեզիա Քնոբլոխը և դոցենտ Օվսաննա Զադոյանը, պրոֆեսոր Գազիկ Շմավոնյանը: Ընդ որում, խմբի կազմակերպած 1-ին միջազգային սեմինարը (2DMD-2022) գրեթե նույն մասնակիցների մասնակցությամբ տեղի է ունեցել հուլիսի 26–30, 2022 թ.-ին Best Western Plus Congress հյուրանոցում, Երևան, ՀՀ:

3. «Տեսական և փորձարարական ֆիզիկա» միջազգային գիտաժողով (HEUREKA) ռաանողների և երիտասարդ հետազոտողների համար, մայիսի 16-18, 2023, Լվով, Ուկրաինա:
4. «Հայկական ընկերակցական» միության (Armenian Fellows Society) 2-րդ գիտաժողով, մասնակիցներ՝ արտերկրի միջազգային հեղինակություն ունեցող, տարբեր բնագավառների 220 հայ գիտնականներ և Հայաստանից հրավիրված գիտնական՝ համազեկուցող պրոֆեսոր Գազիկ Շմավոնյան, Հայաստանի կենտրոնական բանկի ռաումնական կենտրոն, Դիլիջան, հունիսի 26-28, 2023 թ.:
5. «Նյութերի հետազոտման» Եվրոպական ընկերության (E-MRS-2023) տարեվերջյան գիտաժողով, սեպտեմբերի 18-21, 2023, Վարշավա, Լեհաստան:
6. «Համահայկական գիտաժողով-2023», մասնակիցներ՝ խմբի բոլոր անդամներ և այլն, գիտական խմբի առաջին հաշվետու տարվա գիտական գործունեության և ձեռքբերումների մասին զեկուցող՝ պրոֆեսոր Գազիկ Շմավոնյան, կազմակերպիչ՝ Գիտության կոմիտե, Երևանի պետական համալսարան, նոյեմբերի 17-22, 2023 թ. :
7. «Նորարարության սիներջիա՝ մտավոր սեփականության նավարկությունը արհեստական բանականության դարաշրջանում» գիտաժողով, մասնակիցներ՝ խմբի բոլոր անդամներ և այլն, զեկուցող՝ պրոֆեսոր Գազիկ Շմավոնյան, Եվրասիա միջազգային համալսարան, մարտ 15, 2024 թ. , Երևան, Հայաստան:
8. «Լաշկարովյան ընթերցումներ» երիտասարդ գիտնականների գիտաժողով, ապրիլի 3–4, 2024, Կիև, Ուկրաինա
9. «NanoPQIQO-2024» գիտաժողով, մասնակիցներ՝ խմբի բոլոր անդամները և այլք, զեկուցող՝ պրոֆեսոր Գազիկ Շմավոնյան, Ռուս-հայկական համալսարան, մայիսի 13–17, 2024 թ., Երևան, Հայաստան:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գիտական խմբի ղեկավար դոկտոր Թերեզիա Քնոբլոխը 2023թ. երկու անգամ այցելել է ՀԱՊՀ– նանոտեխնոլոգիայի լաբորատորիա:
2. Գիտական խմբի անդամ պրոֆեսոր Գազիկ Շմավոնյանը 2023թ. մեկնել է Ավստրիա:
3. Գիտական խմբի անդամները գիտական դրամաշնորհի շրջանակում փորձնական չափումների և քննարկումների համար գիտական այցելություններ են իրականացրել Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երևանի պետական

համալսարան, Հայ-ռուսական համալսարան և Հայաստանի ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ, Աշտարակ, ինչպես նաև նոր գիտական համագործկցություն է սկսվել Նիդեռլանդների Ութբեյթի համալսարանի պրոֆեսոր Քրիսթիան դե Մորայս Սմիթ Լեհենդի հետ:

Ֆինանսական միջոցներ (հազար ՀՀ դրամ)

	Պայմանագրով նախատեսված /փոխանցված (2024թ. մայիս)	Փաստացի ծախսված	Մնացորդ
1. Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները	104 400 / 30 300	30 300	0
2. Այլ ծախսեր, այդ թվում՝	62 500 / 40 833.4	8 813.4	32 020
2.1 սարքեր, նյութեր և ծառայություններ	43 500 / 36 700	6 480	30 220
2.2 գործուղումներ	16 500 / 3 300	1 500	1 800
2.3 վերադիր ծախսեր	2 500 / 833.4	833.4	0
Ընդամենը	166 900 / 71 133.4	39 113.4	32 020

Մնացորդի վերաբերյալ մեկնաբանություն՝ ըստ տողերի

1. Աշխատանքի վարձատրություն

01.12.2022 թ. - 01.12.2023 թ. ժամանակահատվածում աշխատավարձի վարձատրությունը կազմել է 18 000 000 ՀՀ դրամ, 01.12.2023 թ-ից սկսած խումբը համալրվել է երկու երիտասարդով՝ թիմի անդամների թիվը 5-ից դարձել է 7: իսկ 01.12.2022թ. - 01.06.2024 թ. ժամանակահատվածում աշխատավարձի վարձատրությունը կազմել է 30 300 000 ՀՀ դրամ,

2. 2.1. Սարքեր, նյութեր և ծառայություններ

Պայմանագրով, 2022-2023թթ. նախատեսված է 36 700 000 ՀՀ դրամ: Հայտարարագրված սարքերը երեք անգամ ներկայացվել են հայտարարագրված մրցույթի, որի շրջանակներում ձեռք է բերվել ընդամենը մեկ սարք՝ 6 480 000 ՀՀ դրամ արժողությամբ: Այնուհետև մնացյալ սարքերը նորից են ներկայացվել մրցույթի, սակայն մրցույթի պայմաններին բավարարող հայտեր չեն եղել, գնում չի իրականացվել:

Այսինքն, փաստացի ծախսվել է 6 480 000 ՀՀ դրամ և մնացորդը կազմել է 30 220 000 ՀՀ դրամ: Երեք անգամ մասնակցել ենք սարքերի մրցույթի, որից երկուսն անարդյունք: Ներկա պահին մյուս սարքերը գնելու համար, սարքերի

ճշգրտված պարամետրերով կազմվել է գնման հայտը ու կհայտարարվի մրցույթ:

2.2 Գործուղումներ

Պայմանագրով նախատեսված է 16 500 000 ՀՀ դրամ, որից 2022-2023թթ.՝ 3300000 դրամ: Փաստացի ծախսվել է նշված տարիների փոխանցված 1 500 000 ՀՀ դրամ (30.07.2023թ. - 12.08.2023թ. ժամանակահատվածում Գագիկ Շմավոնյանը գործուղվել է Ավստրիայի ՎՏՀ ՄԻ):

Թեմայի արտասահմանյան ղեկավար Թերեզիա Քնոբլիտսի գործուղման ծախսեր/ հոնորար՝ յուրաքանչյուր տարվա համար նախատեսված է 1 800 000 ՀՀ դրամը կհատկացվի արտասահմանյան հերթական այցի ժամանակ:

2.3 Վերադիր ծախսեր - Պայմանագրով նախատեսված է 2 500 000 ՀՀ դրամ: 2022-2024թթ.-ին փոխանցվել և փաստացի ծախսվել է 833 333 ՀՀ դրամ:

Նախագծի շրջանակներում ձեռքբերված սարքեր/սարքավորումներ, գույք, գործուղում
(Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է պահանջել ծախսերի հաշիվ ապրանքագրերը)

	Անվանում	Քանակ	Ընդհանուր արժեք, ՀՀ դրամ
1.	Երկուղղի սնուցման աղբյուր և չափիչ սարք / DUAL Source and Measure SMU instrument / Keithley 2614B Tektronix	1	6 480 000
2.	Գործուղում Ավստրիա	1	1 500 000
3.	Ընդամենը		7 980 000

Նախագծի ընթացքն՝ ըստ օրացուցային պլանի (առավելագույնը 2 էջ)

Փորձական հետազոտություններն իրականացվում են 2022 թ. դեկտեմբերի 1-ից:

Քանի որ որակյալ և անհրաժեշտ պարամետրերով նանոգծային երկչափ թաղանթների ու տրանզիստորային կառուցվածքների ստացումը և նանոտեխնոլոգիական տարբեր հետազոտությունները և դրանց հիման վրա երկչափ սարքերի պատրաստումը բավականին բարդ և երկարատև գործընթացներ են, ապա մինչ մրցույթային կարգով անհրաժեշտ սարքավորումների գնումը, անխափան և համապարփակ հետազոտությունների շարունակականությունն ապահովելու նպատակով ավստրիացի գործընկերների հետ նախապես ընտրվել է որոշակի ռազմավարություն, ըստ որի փորձնական աշխատանքները համակարգվել են հետևյալ կերպ: Քանի որ ՀԱՊՀ նանոտեխնոլոգիական խմբի մշակված «Հարթակների (մակերևույթների) տրորման» տեխնոլոգիան (ՀՏՏ) շատ պարզ է և հնարավորություն է տալիս լաբորատոր պայմաններում, նույնիսկ ձեռքով, ստանալ երկչափ նանոգծային ատոմական թաղանթներ և դրանց հիման վրա պատրաստել նանոգծային տրանզիստորային կառուցվածքներ, ապա մինչ մրցույթային կարգով սարքավորումների գնումը (որը երկարատև գործընթաց է), տրանզիստորների նախագծումը, երկչափ թաղանթների ստացումը, դրանց հիման վրա տարբեր կառուցվածքների պատրաստումը և օպտիկական ու էլեկտրական հետազոտումն իրականացնել ՀԱՊՀ-ում, իսկ կառուցվածքների մետաղական հպակների ստացումը և դաշտային տրանզիստորների վերջնական պատրաստումը, ինչպես նաև դրանց էլեկտրական բնութագրերի (ՎԱԲ-երի) փորձնական հետազոտությունները և օպտիկական (ՕՄ), տեսաձրող էլեկտրոնային (ՏԷՄ) ու ատոմաուժային (ԱՈՒՄ)

մանրադիտակներով չափումները՝ ՎՏՀ ՄԻ-ում: Հետագայում անհրաժեշտ սարքավորումների գնումից հետո երկչափ տրանզիստորների պատրաստումը և էլեկտրոնային բնութագրումն ամբողջությամբ կիրականացվի ՀԱՊՀ-ում՝ ՎՏՀ ՄԻ-ի հետ համագործակցությամբ:

Երկչափ ԴՏ-երի պատրաստման համար իրականացվում են հետևյալ փորձնական քայլերը:

I. ՄԵԿՈՒՍԻՉ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՎՐԱ ԵՐԿՉԱՓ ՆԱՆՈԳԾԱՅԻՆ ԿԻՍԱՀԱՂՈՐԴԱՅԻՆ ԹԱՂԱՆԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Սենյակային ջերմաստիճանում ՀՏՏ-ով ձեռքով պատրաստվում են ատոմական հաստությամբ որակյալ մեկուսիչ և կիսահաղորդչային նանոգծային երկչափ թաղանթներ կամ շերտեր, ինչպիսին են մի քանի ատոմական հաստությամբ գրաֆինի, մոլիբդենիումի երկսուլֆիդի (MoS_2), վոլֆրամի երկսուլֆիդի (WS_2), գրաֆինի օքսիդի (GO), նոսրացրած գրաֆինի օքսիդի (rGO) նանոգծերը և դրանց համակցությունները՝ առանց կիրառելու բարձր ջերմաստիճան, քիմիական նյութեր, նանոտեխնոլոգիական բարդ սարքավորումներ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ նանոգծերն ունեն յուրահատուկ կառուցվածք, բաղկացած են քվանտային կետերից: Բացի այդ, նանոգծերն ունեն համալարելի չափեր (հաստություն (բազմաշերտից մեկ շերտ), երկարություն (տասնյակ նանոմետրից մինչև միլիմետր) և լայնություն (մի քանի տասնյակ նանոմետր)), ձև (գծայինից շրջանաձև և սպիրալաձև) և մակերևութային ռելիեֆ: Քանի որ երկչափ շերտերը բաղկացած են համալարելի նանոգծերից, ապա հնարավոր է ստանալ տարբեր բնութագրերով երկչափ ԴՏ-երի կառուցվածքներ:

ՀԱՊՀ-ում պարբերաբար ՀՏՏ-ով պատրաստվում են նոր նմուշներ՝ տարբեր հաստությամբ (5, 100, 200 և 300 նմ) SiO_2 , GO և rGO մեկուսիչ շերտերով տարբեր մակերեսով (1, 19 և 78.5 սմ²) Si հարթակների վրա 1–4 ատոմական հաստությամբ, 20–30 նմ լայնությամբ և մինչև 200 նմ երկարությամբ երկչափ կիսահաղորդչային՝ գրաֆինի, անցումային մետաղական դիքալկոգենիդների (MoS_2 , WS_2) և մեկուսիչ (GO, rGO) նանոգծային երկչափ ատոմական թաղանթներ, որոնք ԴՏ-երի համար ծառայում են որպես երկչափ հոսքուղիներ,

Երկչափ կիսահաղորդչային և մեկուսիչ նանոգծերի և հարթակ-համակցություն որակը.

- կարգավորվում է համալարելով մակերևութային տրորման պայմանները, ինչպիսիք են տրորման արագությունն ու տևողությունը, փոշու կոնցենտրացիան ու բաշխումը և կիրառված ճնշումը:
- վերահսկվում է ՕՄ, ՏԷՄ և ԱՈՒՄ-ների և ռամանյան սպեկտրոսկոպիայի միջոցով:

Ստացված արդյունքների հիման վրա տրորման պայմանները օպտիմալացվում են բոլոր նյութերի և համակցությունների համար:

II. ՄԵԿՈՒՍԻՉ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՎՐԱ ԵՐԿՉԱՓ ԿԻՍԱՀԱՂՈՐԴԱՅԻՆ ՆԱՆՈԳԾԱՅԻՆ ՀՈՍՔՈՒՂԻՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Համալարելի նանոգծերը երկչափ ԴՏ-երի համար ծառայել են որպես տարբեր պարամետրերով երկչափ հոսքուղիներ:

III. ԵՐԿՉԱՓ ԿԻՍԱՀԱՂՈՐԴԱՅԻՆ ՆԱՆՈԳԾԱՅԻՆ ՀՈՍՔՈՒՂՈՎ ԴԱՇՏԱՅԻՆ ՏՐԱՆԶԻՍՏՈՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

- Նախագծված տարբեր չափերով նանոգծերի հիման վրա պատրաստվում են ստորին փականով նանոգծային ԴՏ-ների կառուցվածքներ: Այդ նպատակով «Մաքուր» սենյակում մեկուսիչ հարթակ – երկչափ կիսահաղորդիչ համակցությունները ենթարկվում են առանց դիմակի ֆոտոլիտոգրաֆիայի և մետաղապատվում են:

- Վակուումային մխանային կայանով հետազոտվում են տարբեր չափերով նանոգծային ԴՏ-ների ՎԱԲ-երը: Դրանց վերլուծությամբ որոշվում է օպտիմալ չափերով նանոգծային

հոսքուղի ունեցող արդյունավետ ԴՏ-ը՝ արդյունավետության և կայունության սահմանափակումները հասկանալու համար:

IV. ՓՈՐՁՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԴՏ-երի պատրաստման տարբեր փուլերում նմուշների խմբաքանակները փոխանակվում են ավստրիացի գործընկերների հետ և ստացված փորձնական արդյունքները համատեղ վերլուծվում են հետագա չափումների արդյունավետ իրականացման նպատակով:

V. ՓՈՐՁՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐ

Այս ժամանակահատվածում ՀԱՊՀ գիտական խումբը ՎՏՀ ՄԻ համատեղ ատոմական շերտերի հիման վրա ՀՏՏ-ով պատրաստել է տարբեր պարամետրերով MoS₂, WS₂ և այլ նանոգծային ԴՏ-ներ: Օպտիկական և էլեկտրոնային մանրադիտակների պատկերների և ՎԱԲ-երի հետազոտությունները ցույց են տվել, որ հնարավոր է բարելավել դրանց բնութագրերը: Այդ նպատակով տրորման տարբեր պայմանների դեպքում պատրաստվել են նմուշների տարբեր խմբաքանակներ, օրինակ՝ 30 նմ հաստությամբ Si-ի երկօքսիդի շերտի վրա տարբեր չափերով, ձևով և մակերևութային ռելիեֆով նանոգծային նմուշներ: Որոշակի փորձարարական ճշգրտումներից հետո լավագույն բնութագրեր ունեցող նմուշների հիման վրա կպատրաստվեն նանոգծային ԴՏ-ների նոր խմբաքանակներ և կհետազոտվեն: Փորձնական արդյունքների համեմատությամբ կորոշվեն հետագա անելիքները:

Բացի այդ, հետաքրքրական է, որ վերջերս մեր հայտնաբերած նոր նանոերկույթի առկայությունը հաստատվում է և այն կարող է շրջադարձային լինել երկչափ նյութերի ստացման և երկչափ սարքերի պատրաստման համար: Հետագա հետազոտությունները ուղղված կլինեն պատրաստված նանոգծային երկչափ ԴՏ-երի բնութագրերի բարելավմանը, հայտնաբերված նանոերկույթի համակողմանի ուսումնասիրմանը, ինչպես նաև երկչափ կառուցվածքների տվիչային հատկությունների հետազոտմանը:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության անվանում	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
Մշտադիտարկված դրամաշնորհների ծածկագրեր	24NPUA-CON-I-2B, 21AG-2B011, 22rI-048
Մշտադիտարկման իրականացման օօ/աա/տոտոտ	4 Հուլիս 2024

Ներածական

2024 թվականի հուլիսի 4-ին Մշտադիտարկող Հանձնաժողովը իրականացրել է ամբողջական մոնիթորինգային այց Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարան: Այցի հիմնական նպատակներն էին դիտարկել ընթացիկ նախագծերը, գնահատել տարբեր ֆինանսավորման ծրագրերով ձեռք բերված սարքավորումների վիճակը, ստուգել լաբորատորիաների և գրասենյակային տարածքների վերանորոգման ընթացքը, ինչպես նաև հետևել խմբի անդամների գործունեությանը:

Գիտական արդյունք. Կազմակերպության կողմից հետազոտական հրապարակումների քանակը և որակը, ներառյալ ամսագրերը, գիտաժողովների նյութերը, գրքերը, արտոնագրերը, տեխնոլոգիայի բարելավումներ: Սա կարող է ներառել միջազգային հոլումների քանակը, ամսագրերի ազդեցության գործակիցը և այլն:

Չնայած դիտարկված ծրագրերի շրջանակներում տպագրվել է մոտ 90 հոդված, սակայն պետք է նշել, որ դրանցից քչերն են տպագրվել միջազգային հեղինակավոր ամսագրերում: Նշենք նաև, որ կան նաև տեղական արտոնագրեր:

Ֆինանսավորման աղբյուրներ. պետական դրամաշնորհներից, այլ կազմակերպություններից և բարեգործական աղբյուրներից Կազմակերպության ֆինանսավորում ապահովելու կարողությունը:

Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանում գիտական հետազոտություններ կատարելու հիմնական աղբյուրը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից տրամադրվող միջացներն են: Պետք է նշել սակայն, որ բացի անմիջական ֆինանսավորումից (սարքավորումների գնումներ և գիտաշխատողների աշխատավարձեր), օգտագործվում են նաև սեփական միջոցները և որոշ հովանավորողների միջոցները վերանորոգում իրականացնելու համար: Առանձնահատուկ է FAB լաբորատորիայի ստեղծումը Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ ներառյալ Հայաստանում եզակի դրոնների թեստավորման հատուկ գոտու ստեղծումը:

Համագործակցություններ. այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ծավալն ու որակը:

Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանում գործող որոշ խմբեր ունեն կապեր տեղական արդյունաբերական ընկերությունների հետ: Կան նաև որոշակի միջազգային կապեր նշված ծրագրերի շրջանակներում, որոնք սակայն սակավաթիվ են:

Կրթություն, ուսուցում, գիտելիքի փոխանցում և տարածում. գիտնականների և հետազոտողների երիտասարդների կրթման և վերապատրաստման ուղղությամբ աշխատանքներ (սեմինարներ, պրակտիկաներ և մենթորության հնարավորություններ): Հետազոտության արդյունքները տարածելու ավելի լայն լսարաններին, ներառյալ հանրությանը, քաղաքականություն մշակողներին և ոլորտի շահագրգիռ կողմերին: Սա կարող է ներառել հանրային դասախոսություններ, լրատվամիջոցների ներգրավվածություն, իրազեկման ծրագրեր և գիտական հաղորդակցման նախաձեռնություններ:

Բոլոր ծրագրերում ընդգրկված են երիտասարդ գիտաշխատողներ, որոնք պարբերաբար մասնակցում են խմբերում և ամբիոններում տեղի ունեցող սեմինարներին և գիտաժողովներին: Երիտասարդ գիտաշխատողները անցնում են նաև պրակտիկաններ լաբորատորիաներում, ծանոթանալով նոր գնված սարքավորումների աշխատանքի սկզբունքներին և հմտություններին:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ. հետազոտական օբյեկտների, սարքավորումների և օժանդակ ծառայությունների առկայությունը և որակը, որոնք տրամադրվում են **Կազմակերպության** կողմից իր հետազոտողներին:

Լաբորատորիաների սարքավորումների մեծ մասը շատ հին է՝ դեռ խորհրդային շրջանից: Որոշ երիտասարդ հետազոտողներ պլանավորում դիմել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած ծրագրերին՝ նորագույն սարքավորումների ձեռք բերման համար: Այնուամենայնիվ, կազմակերպությունում հետաքրքիր մոտեցում են կիրառել, ստեղծելով ընդհանուր օգտագործման լաբորատորիա: Ընդհանուր օգտագործման լաբորատորիա ստեղծելու նորարարական մոտեցումը թույլ է տվել ձեռք բերել թանկարժեք սարքավորումներ, որոնք հասանելի են բոլոր խմբերի համար՝ համակարգված ժամանակացույցով:

Եզրակացություն

Մոնիթորինգի այցը արժեքավոր տեղեկատվություն տրամադրեց Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընթացիկ վիճակի վերաբերյալ: Ինստիտուտը նշանակալի առաջընթաց է գրանցել հետազոտությունների և ենթակառուցվածքների բարելավման գործում: Սակայն դեռևս մնում է հին սարքավորումների թարմացման և նորերով փոխարինելու խնդիրը: Սարքավորումների համատեղ օգտագործման նորարարական մոտեցումը այս պահին լավագույն լուծում է հանդիսանում

համագործակցային և դինամիկ զարգացող հետազոտական միջավայր ստեղծելու գործում:

Առաջարկություններ

Խորհուրդ է տրվում ավելի ակտիվ դիմել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած ծրագրերին, հատկապես գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար հայտարարվող ծրագրերին:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության անվանում	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
Մշտադիտարկված դրամաշնորհների ծածկագրեր	24NPUA-CON-I-2B,22rI-048, 21AG-2B011
Մշտադիտարկման իրականացման օօ/աա/տտտտ	

Ներածական

Մշտադիտարկման նպատակով կատարվել է այց «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամում ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերին և թեմաներին ծանոթանալու համար: Ծանոթացել եմ այստեղ գտնվող բոլոր գիտատեխնոլոգիական լաբորատորիաների, առկա նյութատեխնիկական բազայի և գիտաինժեներական անձնակազմի հետ: Եղել են քննարկումներ վերջին տարիների ձեռքբերումների, առկա խնդիրների և ապագա պլանների վերաբերյալ:

Գիտական արդյունք. Կազմակերպության կողմից հետազոտական հրապարակումների քանակը և որակը, ներառյալ ամսագրերը, գիտաժողովների նյութերը, գրքերը, արտոնագրերը, տեխնոլոգիայի բարելավումներ: Սա կարող է ներառել միջազգային հղումների քանակը, ամսագրերի ազդեցության գործակիցը և այլն:

Վերջին տարիներին համալսարանի տարբեր ստորաբաժանումների կողմից գիտատեխնոլոգիական ակտիվության արդյունքում "Web of Science, Scopus" միջազգային շտեմարաններում առկա ամսագրերում տպագրվել են ավելի քան 40 աշխատանքներ, իսկ ՀՀ ԲԿԳԿ-ի ցանկում առկա (և այլ) ամսագրերում այն եղել է ավելի քան 32: Եղել է 28 տեղական և միջազգային գիտաժողովների մասնակցություն:

Ֆինանսավորման աղբյուրներ. պետական դրամաշնորհներից, այլ կազմակերպություններից և բարեգործական աղբյուրներից Կազմակերպության ֆինանսավորում ապահովելու կարողությունը:

Համալսարանում գործում են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից տրված մի շարք դրամաշնորհային ծրագրեր: Մասնավորապես՝ այստեղ առկա են Առաջատար հետազոտությունների աջակցության և Հեռավար լաբորատորիաների հիմնադրման խոշոր ծրագրեր, որոնք ձևավորում են Համալսարանի գիտական ակտիվության զգալի մասը:

Համագործակցություններ. այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ծավալն ու որակը:

Համալսարանի ստորաբաժանումները համգործակցության մեջ են տարբեր տեղական և միջազգային գիտահետազոտական հաստատությունների հետ: Առկա տեղական համագործակցությունները ներառում են Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը, Երևանի պետական համալսարանը, Հայ-ռուսական համալսարանը, Հայաստանի ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը և այլն: Նոր գիտական համագործակցություններ են սկսվել Նիդեռլանդների Ութթեջթի համալսարանի իշպես նաև Ավստրիական և Բելառուսական համալսարանների հետ:

Կրթություն, ուսուցում, գիտելիքի փոխանցում և տարածում. գիտնականների և հետազոտողների երիտասարդների կրթման և վերապատրաստման ուղղությամբ աշխատանքներ (սեմինարներ, պրակտիկաներ և մենթորության հնարավորություններ): Հետազոտության արդյունքները տարածելու ավելի լայն լսարաններին, ներառյալ հանրությանը, քաղաքականություն մշակողներին և ոլորտի շահագրգիռ կողմերին: Սա կարող է ներառել հանրային դասախոսություններ, լրատվամիջոցների ներգրավվածություն, իրազեկման ծրագրեր և գիտական հաղորդակցման նախաձեռնություններ:

Գիտնականների և հետազոտողների երիտասարդների կրթման և վերապատրաստման ուղղությամբ կատարվող աշխատանքները գտնվում են բավարար մակարդակի վրա: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը բավական փորձառու է և կատարվում են գիտական արդյունքների պատշաճ տարածում ու փոխանցում երիտասարդ սերունդներին: Տարբեր ստորաբաժանումների այցի ժամանակ ցանկալի կլիներ տեսնել գիտահետազոտական աշխատանքներին ինտեգրված ավելի մեծ թվով երիտասարդներ, որի արդյունքում կիրականանա սահուն սերընդափոխություն: Տպավորությունն այնպիսին էր, որ տարեց գիտաշխատողներն ավելի մեծ թիվ են կազմում:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ. հետազոտական օբյեկտների, սարքավորումների և օժանդակ ծառայությունների առկայությունը և որակը, որոնք տրամադրվում են **Կազմակերպության** կողմից իր հետազոտողներին:

Համալսարանում գիտակրթական միջավայր ապահովող ենթակառուցվածքները գտնվում են բավարար վիճակում: Առկա են նոր վերանորոգված և կահավորված ստորաբաժանումներ, նաև տեսանելի էր ընթացիկ աշխատանքներ այս ուղղությամբ: Առավել տպավորիչ էր, Համալսարանի Գիտական հետազոտությունների և ինովացիոն մշակումների կենտրոնը, որտեղ առկա են նորագույն ինժեներական սարքավորումներ: Ընդհանուր առմամբ բավական մտահոգիչ էր ամենուր հին սարքավորումների առկայությունը, որոնց արդիականացնելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից հայտարարվող համապատասխան մրցույթներին:

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի գիտատեխնիկական ակտիվությունը գտնվում է բավարար մակարդակի վրա: Այստեղ գործում են անվանի և վաստակաշատ գիտնականներ, որոնք իրենց փորձն են փոխանցում երիտասարդ սերընդին:

Առաջարկություններ

Համալսարանում անհրաժեշտ է առավել ուշադրություն դարձնել գիտակրթական աշխատանքներին երիտասարդ սերունդի առավել մեծ ներգրավվածությանը: Անհրաժեշտ է ցուցաբերել ակտիվության նաև միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու ուղղությամբ: Անհրաժեշտ է ավելի ինտենսիվ նախաձեռնություններ իրականացնել հնամաշ սարքավորումների արդիականացման ուղղությամբ:



Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ
իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության
ծրագրերի և թեմաների մշտադիտարկում – 2024

ՏԵՂԵԿԱՆՔ

(Ծրագրի/թեմայի կատարման ընթացքի, ձեռքբերված արդյունքների, պայմանագրով նախատեսված առաջադրանքին, օրացուցային պլանին և ծախսերի նախահաշվին համապատասխանության մասին)

Կազմակերպության անվանում	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
Ծրագրի/թեմայի ծածկագիր և վերնագիր (ըստ հավելվածների)	
1. (Հավելված 1)	24NPUA-CON-I-2B Գիտական հետազոտությունների և ինովացիոն մշակումների կենտրոնի պահպանում և զարգացում
2. (Հավելված 2)	21AG-2B011 Պերովսկիտ-սիլիցիում երկանցումային արևային տարրերի մշակում
3. (Հավելված 3)	22rI-048 Տարբեր մեկուսիչ հարթակների վրա մակերևութային տրորմամբ ստացված երկչափ կիսահաղորդիչներ՝ հաջորդ սերնդի էլեկտրոնիկայի համար
Մշտադիտարկման ժամկետը	«30» մայիսի 2024 թ. - «20» սեպտեմբերի 2024թ.
Մշտադիտարկում իրականացնելու հիմքը	ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 3-ի N 141-Ա հրաման

Լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատակիցներ (շաբաթական 40 ժամ)

	Պաշտոնի անվանում	Քանակ
1.	Ստորաբաժանման ղեկավար	4
2.	Խմբի ղեկավար	-
3.	Գլխավոր գիտաշխատող	-
4.	Առաջատար գիտաշխատող	-
5.	Ավագ գիտաշխատող	1

6.	Գիտաշխատող	6
7.	Կրտսեր գիտաշխատող	3
8.	Ավագ լաբորանտ	-
9.	Լաբորանտ	2
10.	Ավագ ճարտարագետ	-
11.	Ճարտարագետ	1

Հավելված 1

(ըստ յուրաքանչյուր ծրագրի/թեմայի)

<u>Մշտադիտարկումն իրականացրած աշխատանքային խումբ</u> (ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 10-ի N 146-Ա/Ք հրաման)	Ղարիբյան Կարեն Սուքիասյան Նաիրա Կարապետյան Լարիսա Ալեքսանյան Միքայել Հայրապետյան Դավիթ
<u>Մշտադիտարկումն իրականացվել է ըստ հետևյալ փաստաթղթերի/նյութերի.</u> - ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի միջև կնքված 2024 թվականի հունվարի 28-ի N 10-4/24-Լ/ NPUA պայմանագիր, - ընթացիկ հաշվետվություն՝ այդ թվում տեղեկություններ կազմակերպության ֆինանսական միջոցների օգտագործման մասին, - այցելություն	

Հրատարակած գիտական աշխատանքներ (քանակական և որակական)

2024թ. հունիսի 1-ի դրությամբ ընթացիկ տարում տպագրվել են հետևյալ ուղղություններով՝ «Էլեկտրամեխանիկա և էլեկտրառադիոնյութեր» 5, «Ավտոմատացում և էլեկտրամագնիսական համակարգեր» 5, «Հելիոտեխնիկա» 3, «Կիսահաղորդչային ֆոտոէլեկտրական սարքեր» 2, «Ֆոտոէլեկտրոնային սարքեր կապի օպտիկական համակարգերում» 5, «Միկրո և նանոէլեկտրոնիկա» 2, «Համակարգային վերլուծություն» 2, «Օդային ռորոտատեխնիկա» 3, «Ռորոտատեխնիկա» 1, «Մեքենաշինական տեխնոլոգիաներ» 2, «Հիդրոտեխնիկա» 2, «Քիմիական տեխնոլոգիաներ և պոլիմերային նանոկոմպոզիտներ» 2, Քիմիական տեխնոլոգիաներ և պոլիմերային նանոկոմպոզիտներ» 1, «Ռենտգենակառուցվածքային հետազոտություններ» 2, «Նյութագիտություն և մետալուրգիա» 6, «Շփագիտություն» 2, «Տեխնոլոգիական չափումներ» 2 և «Կլիմայի փոփոխություն և կայուն զարգացում» 1 գիտական աշխատանքներ:
--

Գիտաժողովներ, այցելություններ, գիտական միջոցառումներ

Թվով 5 գիտաժողովներ, այցելություններ և գիտական միջոցառումներ:

Համագործակցություն (այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն)

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը համագործակցում է ինչպես ներպետական հետազոտական և ուսումնական կազմակերպությունների, այնպես էլ արտասահմանյան ոլորտի առաջատար գիտական կենտրոնների և խմբերի հետ:

Նյութատեխնիկական բազա (սարքեր/սարքավորումներ, գույք)

Ներկայացված չէ:

Ֆինանսական

Ներկայացված ֆինանսական ծախսերը հաստատող փաստաթղթերը համապատասխանում են նախահաշվին, թերություններ չեն հայտնաբերվել:

Ամփոփում (մշտադիտարկման արդյունքներ) և առաջարկություն

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Տարբեր մեկուսիչ հարթակների վրա մակերևութային տրորմամբ ստացված երկչափ կիսահաղորդիչներ՝ հաջորդ սերնդի էլեկտրոնիկայի համար» (ծածկագիր՝ 22rI-048) թեմայի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքները մեծամասամբ համապատասխանում են ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի միջև կնքված 2024 թվականի հունվարի 29-ին N 10-4/24-I/NPUA պայմանագրի դրույթներին: Համալսարանում անհրաժեշտ է առավել ուշադրություն դարձնել գիտակրթական աշխատանքներին երիտասարդ սերնդի առավել մեծ ներգրավվածությանը: Անհրաժեշտ է ցուցաբերել ակտիվության նաև միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու ուղղությամբ: Անհրաժեշտ է ավելի ինտենսիվ նախաձեռնություններ իրականացնել հնամաշ սարքավորումների արդիականացման ուղղությամբ:

Հավելված 2

(ըստ յուրաքանչյուր ծրագրի/թեմայի)

Խմբի անդամներ (նշել խմբի բոլոր անդամներին, այդ թվում փոփոխված)

	Ազգանուն անուն հայրանուն	Պաշտոն (ղեկավար,	Ամսական աշխատավարձի չափ	Կատարողի
--	-----------------------------	---------------------	----------------------------	----------

		կատարող, երիտասարդ)	ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	նախագծում ընդգրկված ժամանակահատված (սկիզբ – ավարտ)
1	Այվազյան Գագիկ Երջանիկի	համաղեկավար	360 000	01.10.2021–31.10.2022
		ղեկավար	450 000	01.11.2022 –մինչ օրս
2	Մաթևոսյան Լենրիկ Արշալույսի	կատարող	310 000	01.10.2021- մինչ օրս
3	Ավջյան Կարապետ Էդուարդի	կատարող	310 000	01.10.2021– 30.11.2021
4	Խուդավերդյան Աշոտ Սուրիկի	կատարող	310 000	01.10.2021- մինչ օրս
5	Հախոյան Լևոն Աշոտի	երիտասարդ	310 000	01.10.2021- մինչ օրս
6	Մակարյան Էլյա Ավետիքի	երիտասարդ	100 000	01.10.2021- մինչ օրս
7	Գասպարյան Ֆերդինանտ Վազգենի	ղեկավար	400 000	01.10.2021– 31.09.2022
		կատարող	310 000	01.04.2022- մինչ օրս
8	Դաշտոյան Հարություն Ռոբերտի	կատարող	310 000	01.12.2021- մինչ օրս
9	Գոմցյան Հովհաննես Ավագի	կատարող	310	01.11.2022– 31.03.2023

<u>Մշտադիտարկումն իրականացրած աշխատանքային խումբ</u> (ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 10-ի N 146-Ա/Ք հրաման)	Ղարիբյան Կարեն Սուքիասյան Նաիրա Կարապետյան Լարիսա Ավթանդիլյան Նիկոլայ Ասմարյան Շուշանիկ
<u>Մշտադիտարկումն իրականացվել է ըստ հետևյալ փաստաթղթերի/նյութերի.</u> - ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի միջև կնքված 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1-14-21AG պայմանագիր, - ընթացիկ հաշվետվություն՝ այդ թվում տեղեկություններ կազմակերպության ֆինանսական միջոցների օգտագործման մասին, - այցելություն	

Հրատարակած գիտական աշխատանքներ (քանակական և որակական)

Նախագծի շրջանակներում հրատարակվել են.
Web of Science, Scopus 26 գիտական աշխատանքներ
ՀՀ ԲԿԳԿ ցանկ և այլն 10 գիտական աշխատանքներ

Գիտաժողովներ, այցելություններ, գիտական միջոցառումներ

Նախագծի շրջանակներում կազմակերպվել է 11 գիտաժողովներ, այցելություններ, գիտական միջոցառումներ:

Համագործակցություն (այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն)

Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանում գործող որոշ խմբեր ունեն կապեր տեղական արդյունաբերական ընկերությունների հետ: Կան նաև որոշակի միջազգային կապեր նշված ծրագրերի շրջանակներում, որոնք սակայն սակավաթիվ են:

Նախագծի շրջանակներում իրականացվել է շուրջ 7 գործուղում և մեկ օտարերկրյա գործընկերոջ այց:

Նյութատեխնիկական բազա (սարքեր/սարքավորումներ, գույք)

Նախագծի շրջանակներում ձեռք են բերվել 3 դյուրակիր համակարգիչ, 1-ական արևային էլեմենտների ՎԱԲ-ի թեսթեր, օպտիկական սպեկտրոմետր, մակերևութային դիմադրության չափման քառամխոցային զոնդ, թեստային հարթակ անոդային թիթեղների համար, Գրատախտակ, Օպտիկական սպեկտրոսկոպի համալրակազմ, Օդորակիչ, Սառնարան, Մանրադիտակ, Ազդանշանների գեներատոր և այլ գրասենյակային նյութեր ու պարագաներ:

Ֆինանսական

Ներկայացված ֆինանսական ծախսերը հաստատող փաստաթղթերը համապատասխանում են նախահաշվին, թերություններ չեն հայտնաբերվել:

Ամփոփում (մշտադիտարկման արդյունքներ) և առաջարկություն

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Պերովսկիտ-սիլիցիում երկանցումային արևային տարրերի մշակում» (ծածկագիր՝ 21AG-2B011) թեմայի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքները մեծամասամբ համապատասխանում են ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական

համալսարան» հիմնադրամի միջև կնքված 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1-14-21AG պայմանագրի դրույթներին:

Նախագծում ընդգրկված են երիտասարդ գիտաշխատողներ, որոնք պարբերաբար մասնակցում են խմբերում և ամբիոններում տեղի ունեցող սեմինարներին և գիտաժողովներին: Երիտասարդ գիտաշխատողները անցնում են նաև պրակտիկաններ լաբորատորիաներում, ծանոթանալով նոր գնված սարքավորումների աշխատանքի սկզբունքներին և հմտություններին:

Մասնագետների կողմից առաջարկվում է ՄԳՇ-ում տպագրությունների և երիտասարդ աշխատակիցների քանակի ավելացում, ինչպես նաև ներպետական և միջազգային համագործակցությունների ավելացում:

Հավելված 3

(ըստ յուրաքանչյուր ծրագրի/թեմայի)

Խմբի անդամներ (նշել խմբի բոլոր անդամներին, այդ թվում փոփոխված)

	Ազգանուն անուն հայրանուն	Պաշտոն (ղեկավար, կատարող, երիտասարդ)	Ամսեկան աշխատավարձի չափ, ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	Կատարողի նախագծում ընդգրկված ժամանակահատված (սկիզբ – ավարտ)
1.	Զադոյան Օվսաննա Աշոտի	համաղեկավար	400000	01.12.2022 թ. - 30.11.2027 թ.
2.	Շմավոնյան Գագիկ Շմավոնի	կատարող	400000	01.12.2022 թ. - 30.11.2027 թ.
3.	Միսակյան Լևոն Հրաչի	կատարող	300000	01.12.2022 թ.- 30.11.2027 թ.
4.	Շմավոնյան Գայանե Շմավոնի	կատարող	300000	01.12.2022 թ.- 30.11.2027 թ.
5.	Միքայելյան Հասմիկ Արտյոմի	երիտասարդ	100000	01.12.2022 թ.- 30.11.2027 թ.
6.	Շմավոնյան Արեգ Գագիկի	երիտասարդ	150000	01.12.2023 թ.- 30.11.2027 թ.
7.	Զաքարյան Ալբերտ Արտակի	երիտասարդ	150000	01.12.2023 թ.- 30.11.2027 թ.

<u>Մշտադիտարկումն իրականացրած աշխատանքային խումբ</u>	Ղարիբյան Կարեն Սուքիասյան Նաիրա Կարապետյան Լարիսա
---	---

(ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 10-ի N 146-Ա/Բ հրաման)	Ավթանդիլյան Նիկոլայ Ասմարյան Շուշանիկ
<u>Մշտադիտարկումն իրականացվել է ըստ հետևյալ փաստաթղթերի/նյութերի.</u> 1. ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի միջև կնքված 2022 թվականի նոյեմբերի 28-ի N 10-4/22րլ պայմանագիր, 2. ընթացիկ հաշվետվություն՝ այդ թվում տեղեկություններ կազմակերպության ֆինանսական միջոցների օգտագործման մասին, 3. այցելություն	

Հրատարակած գիտական աշխատանքներ (քանակական և որակական)

Նախագծի շրջանակներում "Web of Science, Scopus" միջազգային շտեմարաններում առկա ամսագրերում տպագրվել են ավելի քան 8 գիտական աշխատանքներ:

Գիտաժողովներ, այցելություններ, գիտական միջոցառումներ

Նախագծի շրջանակներում կազմակերպվել է 12 գիտաժողովներ, այցելություններ, գիտական միջոցառումներ:

Համագործակցություն (այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն)

Համալսարանի ստորաբաժանումները համագործակցության մեջ են տարբեր տեղական և միջազգային գիտահիմնադրական հաստատությունների հետ: Առկա տեղական համագործակցությունները ներառում են Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը, Երևանի պետական համալսարանը, Հայ-ռուսական համալսարանը, Հայաստանի ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը և այլն: Նոր գիտական համագործակցություններ են սկսվել Նիդեռլանդների Ութրեխտի համալսարանի ինչպես նաև Ավստրիական և Բելառուսական համալսարանների հետ:

Նյութատեխնիկական բազա (սարքեր/սարքավորումներ, գույք)

Նախագծի շրջանակներում ձեռք է բերվել մեկ երկուղղի սնուցման աղբյուր և չափիչ սարք / DUAL Source and Measure SMU instrument / Keithley 2614B Tektronix:
Առկա են նոր վերանորոգված և կահավորված ստորաբաժանումներ, նաև տեսանելի էր ընթացիկ աշխատանքները այս ուղղությամբ:

Ֆինանսական

Ներկայացված ֆինանսական ծախսերը հաստատող փաստաթղթերը համապատասխանում են նախահաշվին, թերություններ չեն հայտնաբերվել:

Ամփոփում (մշտադիտարկման արդյունքներ) և առաջարկություն

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Տարբեր մեկուսիչ հարթակների վրա մակերևութային տրորմամբ ստացված երկչափ կիսահաղորդիչներ՝ հաջորդ սերնդի էլեկտրոնիկայի համար» (ծածկագիր՝ 22rl-048) թեմայի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքները մեծամասամբ համապատասխանում են ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի միջև կնքված 2022 թվականի նոյեմբերի 28-ի N 10-4/22rl պայմանագրի դրույթներին:

Նախագծում ընդգրկված են երիտասարդ գիտաշխատողներ, որոնք պարբերաբար մասնակցում են խմբերում և ամբիոններում տեղի ունեցող սեմինարներին և գիտաժողովներին: Երիտասարդ գիտաշխատողները անցնում են նաև պրակտիկաններ լաբորատորիաներում, ծանոթանալով նոր գնված սարքավորումների աշխատանքի սկզբունքներին և հմտություններին:

Մասնագետների կողմից առաջարկվում է ՄԳՇ-ում տպագրությունների և երիտասարդ աշխատակիցների քանակի ավելացում, ինչպես նաև ներպետական և միջազգային համագործակցությունների ավելացում:



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

№ Կ/ՕՏ/2183-24

« 20 » 11 2024թ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ
ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ֆարմանյան,

Ի պատասխան Ձեր 2024թ. նոյեմբերի 18-ի հ.9.0/9.2.2/35747-2024 գրության՝ տեղեկացնում ենք, որ մեր համալսարանում իրականացված ստորև նշված ծածկագրերով ծրագրերի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ Ձեր առաջարկությունները և գրությանը կից ներկայացված փորձագետի եզրակացությունը ընդունվել են ի գիտություն՝

1. Ծածկագիր՝ 24NPUA-CON-I-2B, ղեկավար՝ Գոռ Վարդանյան
2. Ծածկագիր՝ 21AG-2B011, ղեկավար՝ Գագիկ Այվազյան
3. Ծածկագիր՝ 22rI-048, ղեկավար՝ Օվսաննա Զադոյան

Միաժամանակ, հաշվի առնելով փորձագետի եզրակացությունը, հայտնում ենք, որ համալսարանը համապատասխան միջոցառումներ է իրականացնում գիտաինժեներական աշխատանքներում ավելի մեծ թվով երիտասարդների ներգրավման ուղղությամբ, որոնք կկարողանան փորձառու պրոֆեսորադասախոսական կազմից ստանալ պատշաճ գիտելիքներ և կիրառել դրանք գիտակրթական աշխատանքներում: Ինչ վերաբերում է համալսարանում հին սարքավորումների առկայությանը և դրանց արդիականացմանը, ապա հայտնում ենք, որ համալսարանը ակտիվ աշխատանքներ է իրականացնում՝ գիտակրթական անձնակազմին տեղեկացնելով ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից հայտարարվող մրցույթներին մասնակցելու և նորագույն սարքավորումներ ձեռք բերելու համար, ինչպես նաև միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու վերաբերյալ:

Recoverable Signature

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՊՐՈՌԵԿՏՈՐ

X
Ստորագրող
ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
1901680177
Հասցե: 105 Երևանի մարզ, Երևան, 0009, Երան 105
Հեռ.՝ 374 10 520-520

Ա.Ժ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN ASHOT 1901680177

Կապարող՝ գիտական հետազոտությունների և ինովացիոն մշակումների
կենտրոնի տնօրեն Օվսաննա Զադոյան
հեռ.՝ 374 10 520-520

Էլ-փոստ՝ Ovsanna.zadoyan@polytechnic.am

ԳԼԽԱՎՈՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՍՈՒՏԵ № Ա-82960
« 20 » 11 2024.